ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ, Սարգիս Պիծակ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, էջ 152, 77 նկար։

ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը հրատարակել է արվեստագիտության թեկնածու Վիգեն Ղազարյանի «Սարգիս Պիծակ» աշխատությունը, որը նվիրված է միջնադարի նշանավոր մանրանկարիչ Սարգիս Պիծակի ստեղծագործությունների քննությանը։

Սարգիս Պիծակի ծաղկած մատյանների ուսումնասիրությամբ զբաղվել են Ղ. Ալիշանը, Վ. Հացունին, Ս. Տեր-Ներսեսյանը, Գ. Հովսեփյանը, Ա. Երեմյանը և ուրիշներ, սակայն Վ. Ղազարյանի գիրքը մեծանուն վարպետի արվեստին նվիրված առաջին մենագրությունն է, ուր հանգամանալից վերլուծվում են նրա նկարազարդած և ներկայումս մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռագրերը։

Գրքի բաժիններում Վ. Ղազարյանը մատնանշում է այն հիմնական օրինաչափությունները, որոնցով զեկավարվել է նկարիչը տարբեր մատյանների պատկերները կերտելիս։

Սարգիս Պիծակի ձեռագրերի խորանների ուսումնասիրությունից պարզվում է, որ անվանի վարպետը իր մոտիվներով գրեթե նորություն չի բերում խորանարվեստի մեջ, այլ «...զարդարվեստի այդ տիպը հասցնում է իր ավարտին» (էջ 38)։ Մանրանկարների այդ տեսակի համար Սարգիս Պիծակը կիրառել է կիլիկյան մանրանկարիչների XII—XIII դդ. մշակած կառուցվածքային նախօրինակը և մոտիվները (էջ 32, 38)։

Անվանի նկարչի վրձնած մանրանկարների զգալի մասը ավետարանիչների պատկերներ են։ Դրանց ձևավորումների վերլուծությունից հայտնի է դառնում, որ հատկապես այդ նկարազարդումներում են առավել պահպանված բյուզանդական արվեստի ազդեցության հետքերը (էջ 39)։ Նույն մանրանկարների ոճական հատկանիշների հետազոտությունից երևում է, որ Սարգիս Պիծակը ձգտել է ազատագրվել հայ մանրանկարչության նախորդ շրջանի գեղարվեստական առանձին ձեռքբերումներից, մասնավորապես հակադարձ հեռանկարից և եռանգագին շարժման արտահայտություններից։ Նա հարություն է տվել գեղարվեստի հարթապատկերային-նախշաձև բնույթին, առարկաները մատուցելով «...սխեմայի վերածված նշաններով ու սիմվոլներով» (էջ 44)։

Թե՛ պատմական, թե՛ գեղարվեստական իմաստով ուշագրավ է 1337 թ. Մանրուսմունքի անվանաթերթի վրա զետեղված Ներսես Շնորհալու դիմանկարը (էջ 58)։

Սարգիս Պիծակի ձևավորած նշանավոր մատյաններից են 1336 թ. «Արքունական ավետարանը» և 1353 թ. «Բժշկության ավետարանը»։ Այս ձեռագրերի առանձին նկարազարդումների համար օգտագործված են XIII դ. կիլիկյան կանոնիկ սխեմաներ («Տյառնընդառաջ»), կապադովկյան տիպեր («Ծնունդ», «Մկրտություն»), կապադովկյան և բյուզանդական նախօրինակներից կազմված խառը ձևեր («Մուտքը Երուսաղեմ»), արևմտյան և բյուզանդական ավանդույթներ («Հարություն») կամ հազվագյուտ բացառիկ պատկերագրական մանրամասներ («Ավետում»), (էջ 59—68)։

Տեքստային լուսանցանկարներում Սարգիս Պիծակը հանդես է գալիս իբրև հասարակական տրամադրությունների թարգման և իր ստեղծագործություններում արտահայտում է ժամանակի կիլիկյան իրականության մեջ տեղի ունեցող օրհասական ցնցումները (էջ 74—77)։ Սարգիս Պիծակի լուսանցանկարները պարզեցված են և համառոտված։ Նշանավոր վարպետի ձեռագրերում ավետարանական տեքստի գեղանկարչական հակիրճ շարադրանքը, զուսպ, սեղմ և նույնիսկ կրճատված ձևերը հատկապես աչքի են զարնում XIII դ. կիլիկյան մանրանկարիչների բազմամբոխ լուսանցանկարների հետ բաղդատելիս։ Սարգիս Պիծակի արվեստում նկատվող այս փոփոխությունների հետազոտությունը բացառիկ կարևորություն ունի ոչ միայն նրա գեղանկարչական ժառանգության, այլև հետագա դարերի հայ մանրանկարչության քննության տեսակետից, որովհետև XIV դ. հետո հայ ծաղկողները լուսանցանկարների ստեղծման ժա-

մանակ հետևել են ոչ թե XIII դ. կիլիկյան նկարիչների ավանդույթներին, այլ Սարգիս Պիծակի սկզբունքներին։ Հիշյալ փոփոխությունների պատճառը, ինչպես նշում է Վ. Ղազարյանը, «ժամանակաշրջանի խռովահույզ իրադարձություններն են, թշնամու արշավանքներից ու ասպատակություններից խուսափելու համար տեղից տեղ փոխադրվելը, նաև նկարչական պիտույքների սղությունը (այդ են վկայում XIV դ. մի շարք գրաֆիկ ձեռագրեր, նաև ներկի ու մագաղաթի որակը)...» (էջ 75)։

Հայ գրքարվեստի նշանավոր ստեղծագործություններից է 1338 թ. Աստվածաշունչը, որը մեծանուն վարպետը ծաղկել է Կիլիկիայի Կոպիտառ վանքում՝ Հակոբ կաթողիկոսի պատվերով։ Այս մատյանի ձևավորման կարևորությունը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ այստեղ զետեղված են ձեռագրի պատվիրատուի՝ Հակոբ կաթողիկոսի, և իր՝ Սարգիս Պիծակի դիմանկարները, որոնցում նկարիչը զարգացնում է XIII դ. կիլիկյան գրքարվեստում արմատավորված պատմական դիմանկարչության ավանդույթները (էջ 91)։

Հիշարժան է, որ վերը նշված դիմանկարից բացի, պահպանվել են Սարգիս Պիծակի երկու ուրիշ ինքնանկարներ ևս, որոնցից առաջինը հանդիպում է 1331 թ. ծաղկված Ավետարանում (Վենետիկ, Մխիթարյան միաբանության գրադարան, № 16), իսկ երկրորդը՝ 1343 թ. Ավետարանում (Դուբլին, Չեսթեր Բիթի գրադարան, № 614), (էջ 93)։ Անվանի նկարչի տարբեր տարիքները հավերժացրած այդ պատկերները հազվագյուտ երևույթ են Սարգիս Պիծակի ապրած ժամանակաշրջանի քրիստոնեական արվեստում, մանավանդ, եթե նկատի առնենք, որ XIII դ. կիլիկյան նկարիչներից գրեթե ոչ մեկի դիմանկարը հայտնի չէ։

Եզակի մի հուշարձան է 1353 թ. Սսում ծաղկված «Բժշկության ավետարանը»՝ պատկերազարդման իր անկրկնելի համակարգով, որը, ինչպես հիշատակարանում նշում է նկարիչը, նորություն է՝ թելադրված պատվիրատու տեր Բասլի կողմից (էջ 97)։ Այդ նորությունն այն է, որ մատյանի էջերում Քրիստոսի ծննդյան ու մահվան պատմությունն արտահայտող նկարների կողքին պատկերված են կույրերին, դիվահարներին, անդամալույծներին, այսահարներին, բորոտներին բժշկելու և մեռյալներին վերակենդանացնելու տասնյակ տեսարաններ։ Նկարելով հեքիաթապատում հրաշագործ բուժումները, Սարգիս Պիծակը համոզված է եղել, որ Ավետարանը օժտված է հրաշագործ ուժով և ընդունակ է դարմանելու հիվանդների ցավերն ու ախտերը (էջ 96—98)։ Վ. Ղազարյանը նշում է, որ «Բժշկության ավետարանի» ծաղկողի և պատվիրատուի նորամուծությունը պայմանավորված էր ժամանակի ծանր իրականությամբ և արձագանքն էր 1348 թ. ժանտախտի համաճարակի ու կիլիկյան թագավորության ապրած մյուս արհավիրքների (էջ 96—98)։

Սարգիս Պիծակի գեղանկարչական վարպետության մասին է վկայում այն փաստը, որ նա իր ձևավորած մատյաններում «...տալիս է նկարի, լուսանցքի և տեքստի հարաբերակցության միջնադարում հայտնի գրեթե բոլոր ձևերը» (էջ 107)։

Ամփոփելով իր մենագրությունը Վ. Ղազարյանը նշում է, որ «հակառակ կիլիկյան պետության անկման դժնդակ ժամանակաշրջանի», անհամար, անթիվ աղետների, պիծակյան նկարազարդումներն իրենց մեջ խտացնում են «...ժողովրդական կենսափիլիսոփայության մեծ ուժը և լուսավոր շունչը» (էջ 124)։

Գրքի վերջում զետեղված գիտական գրականության, նկարների, անձնանունների, առարկայական ցանկերի կողքին ներկայացված է Սարգիս Պիծակի ծաղկած ձեռագրերի ցանկը։ Այստեղ հեղինակը նշում է, որ հետագայում այդ ցուցակը թերևս կընդլայնվի և կճշտվի։ Հեղինակի ասածը հաստատելու նպատակով կկամենայինք հիշատակել մի քանի հուշարձան, որոնք նույնպես կապվում են մեծ վարպետի արվեստի հետ։

Ամենից առաջ անհրաժեշտ է նշել Նյու Յորքի հանրային գրադարանում պահվող № 1489 Շարակնոցը, որի ստացողներն են իշխանաց իշխան Հեթումը և իր որդի Կոստանդինը՝ ապագա Կոստանդին Գ թագավորը։ Մատյանի գրիչը Թորոս Հռոմկլայեցին է, որը 1331 թ. ընդօրինակել է Սարգիս Պիծակի ձևավորած և ներկայումս Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանում պահվող № 16 ձեռագիրը։ Նյու Յորքի մատյանի ծաղկողի անունը հիշատակարաններում չի նշված, բայց Գ. Հովսեփյանը գտնում է, որ ձեռագրի նկարազարդումների հեղինակը Սարգիս Պիծակն է։ Նույն կարծիքին է նաև Ս. Տեր-Ներսեսյանը[1]։

---

[1] Գ. Հովսեփյան, Մի կարևոր ձեռագիր Նյու Յորքի հանրային մատենադարանում («Նոր գիր», 1944, № 1, էջ 6—24). S. Der-Nersessian, The Chester Beatty Library („A Catalogue of the Armenian Manuscripts", vol. I, Dublin, 1958, p. 37, note 2).

Դրախտվող գրքի ցուցակում բերված Ջեսքեր Բիթի գրադարանի (Դուբլին) երկու մատյանից (№ 561, 614) բացի, այդ հավաքածուի կազմում է գտնվում ևս մի ձեռագիր՝ № 613, որի ձևավորողը նույնպես Սարգիս Պիծակն է[2]։ Այստեղ պետք է ավելացնել Ս. Տեր-Ներսեսյանի նշած ևս երեք ձեռագիր։ Դրանցից առաջինը Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի գրադարանի № 1578 Շարակնոցն է, որը ընդօրինակել ու նկարազարդել է Սարգիս Պիծակը Սսում՝ 1335 թ.։ Հիշատակարանների համաձայն, մատյանի ստացողն է Հովհաննես քահանան[3]։ Մյուս ձեռագիրը 1326 թ. Ավետարանն է, որը պահվում է Լեյդենի (Բելգիա) համալսարանի գրադարանում (Or. 5495)։ Մատյանը ընդօրինակող Սարգիս դրիչը, Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, պետք է նույնացվի Սարգիս Պիծակի հետ[4]։ Ս. Տեր-Ներսեսյանը անվանի նկարչի աշխատանքն է համարում նաև անթվակիր մի Աստվածաշնչի ձևավորումները։ Վերջինս ժամանակին պահվել է Ֆրեգնոյում (Կալիֆորնիա), մասնավոր (Հակոբյան) հավաքածուում[5]։

Բելգիաբնակ արվեստաբան Ս. Աճեմյանի վերջերս հրատարակած հոդվածում քննվում են Ռումինիայում գտնվող XIV դարի կիլիկյան երկու ձեռագրեր։ Ս. Աճեմյանը Սարգիս Պիծակին է վերագրում այդ ձեռագրերից մեկի մանրանկարները։ Խոսքը վերաբերում է Կլուժ-Նապոկա քաղաքի պետական արխիվում պահվող № 11 Ավետարանին, որն ընդօրինակել է Հովհաննես դրիչը՝ Վարդան եպիսկոպոսի պատվերով։ Ս. Աճեմյանը ենթադրում է, որ այն, հավանաբար, Սարգիս Պիծակը ծաղկել է կյանքի վերջին շրջանում[6]։

Ս. Աճեմյանը, ինչպես և Ս. Քոլանջյանը, Սարգիս Պիծակի վրձնի գործն է համարում նաև Երևանի մատենադարանի № 9510 Ավետարանը, որի հեղինակները, պատվիրատուն, ստեղծման տեղն ու ժամանակը հայտնի չեն[7]։

Բրիտանական գրադարանի աշխատակից, հայագետ Վ. Ներսեսյանը հիշատակում է մի ձեռագիր ևս, որի նկարազարդումները, նրա կարծիքով, նույնպես Սարգիս Պիծակի աշխատանքն են։ Խոսքը նախկինում ծակ Մաթեոսյանի, իսկ այժմ Բրիտանական գրադարանի սեփականությունը հանդիսացող Սաղմոսագրքի մասին է (Or. 13804)[8]։

Սարգիս Պիծակի արվեստին առնչվող մյուս հուշարձանը XIII դ. վերջով և XIV դ. սկզբով թվագրվող կիլիկյան Աստվածաշունչն է, որը Լենինգրադի Էրմիտաժի սեփականությունն է (VP—1011)[9]։ Ձեռագրի ստեղծման տեղն ու ճշգրիտ թվականը անհայտ են։ Հիշատակարաններից հայտնի է գրչի անունը՝ Հովսեփ։ Ս. Տեր-Ներսեսյանը նշում է հիշյալ ձեռագրի

---

[2] S. Der-Nersessian, Նշվ. աշխ., էջ 181։

[3] Նույն տեղում, էջ 37, ծան. 2, Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հ. 5, Երուսաղեմ, 1971, էջ 359—362, նկ. 25—28, A. Mekhitarian, Treasures of the Armenian Patriarchate of Jerusalem, Catalogue no. 1, Jerusalem, 1969, p. 26, № 19; B. Narkiss, Armenian Art Treasures of Jerusalem. Massada Press, 1979, pp. 81—87, fig. 106.

[4] S. Der-Nersessian, Նշվ. աշխ., էջ 37, ծան. 2։

[5] Նույն տեղում։

[6] Տե՛ս S. Agémian, Deux manuscrits cilicien du XIVe siècle dans les Archives d'État de Cluj-Napoca („Revue des Etudes Sud-Est Européennes", t. XVIII, 1980, № 2, p. 251—261).

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 263, Ս. Քոլանջյան, Ռումինահայերի արժեքավոր նվերը Հայաստանի Մատենադարանին («Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 229)։

[8] Հ. Հապեջյան, Սաղմոսարան գրված Լևոն Գ թագավորի համար (Զ(Բ—1283), («Հանդես ամսօրյա», 1922, փետրվար—մարտ, էջ 139—155), Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազի, Վենետիկ, 1923, էջ 259, նկ. 88, Գ. Հովսեփյան, Լևոն Գ-ի Սաղմոսարանի մանրանկարչությունը («Անահիտ», 1930, հուլիս—օգոստոս, էջ 5—6), V. Nersessian, Armenian Manuscript Illumination, The British Library Board, 1978, p. 7, 11—12; The Christian Orient, Catalogue of an exhibition at the British Library, London, 1978, p. 65.

[9] Т. А. Измайлова, Армянские иллюстрированные рукописи Государственного Эрмитажа. Каталог («Труды Государственного Эрмитажа», т. X, 1969, с. 114—116); «Искусство Византии в собраниях СССР», Каталог выставки, т. 3, М., 1977, с. 151.

և Ջեսթեր Բիթի գրադարանի № 560 պատառիկ մատյանի[10] էջերի նմանությունը։ Նրա կարծիքով Դոբլիեի մագաղաթե էջերը մասն են կազմում Էրմիտաժի Աստվածաշնչի։ Նա ցույց է տալիս Էրմիտաժի ձեռագրի մանրանկարների ոճական հարազատությունը Դրազարկի XIII դ. վերջի մատյանների և, մասնավորապես, Սարգիս Պիծակի ձեռագրերի նկարազարդումների հետ։ Ս. Տեր-Ներսեսյանը այդ նմանությունը հակված է բացատրելու ավելի շուտ նկարիչների միևնույն դպրոցին պատկանելու իրողությամբ, քան թե վարպետների նույնությամբ[11]։

Հաջորդ ստեղծագործությունը, որը, մեր կարծիքով, պատկանում է Սարգիս Պիծակի վրձնին, անստորագիր մանրանկար է՝ սեռնձված XIII դ. հունական Ավետարանի կազմին։ Այս ձեռագիրը հունական Աթոս լեռան վրա գտնվող Դիոնեսիոսի վանքի սեփականությունն է (cod. 27)։ Մանրանկարը, որը հունական աշխատանք է համարվում և պատկերում է Ղուկաս ավետարանչին, իրականում հայկական ստեղծագործություն է, խիստ տարբեր հունական մանրանկարներից[12]։ Թե՛ պատկերագրությամբ, թե՛ ոճով և թե՛ զարդաձևերի մանրամասներով այն համընկնում է Սարգիս Պիծակի ձաղկած 1331 թ. մատյանի (Վենետիկ, Մխիթարյան միաբանության գրադարան, ձեռ. № 16) Մարկոս ավետարանչի պատկերին[13]։

Սարգիս Պիծակին վերագրվող մանրանկարների թվին վերջերս ավելացել է ևս մեկը։ Բրյուսելաբնակ եգիպտագետ Ա. Մխիթարյանը գրախոսվող աշխատության հրատարակվելուց հետո Մատենադարան ուղարկած իր նամակում մասնագետների ուշադրությունը հրավիրում է նոր Զուղայի Ամենափրկիչ վանքում գտնվող մի բագկաթոռի մեջքին ամրացված նկարազարդ մագաղաթե թերթի վրա, որի ձևավորման հեղինակը, նրա կարծիքով, Սարգիս Պիծակն է[14]։

Եզրափակելով մեր խոսքը, անդրադառնանք Վ. Ղազարյանի մի դիտողությունը։ Էջ 91-ում նա գրում է. «Թվում է, թե հայ կերպարվեստում Սարգիս Պիծակը և Ավագը առաջիններից են, որ ունեն ինքնանկարներ։ Հարկ է նկատել, որ հայ կերպարվեստում նկարիչների առաջին ինքնանկարներն են Սարգիս Փառշիկի (Փարշիկի) պատկերը՝ Անիի ս. Փրկչի եկեղեցում (XIII դ. սկիզբ)[15], կիլիկյան Հեթում արքայի եղբոր՝ Հովհաննես արքեպիսկոպոսի մանրանկարը՝ 1266 թ. ժողովածուում (Մատենադարան, № 4245)[16], և Թորոս Սարկավագի ինքնանկարը՝ 1311 թ. Ավետարանում (Ջեսթեր Բիթի գրադարան, ձեռ. № 559)[17]։

Սարգիս Պիծակին վերաբերող մատենագիտությունն առավել լրիվ տեսնելու նպատակով նկատենք, որ գրքում նշված աշխատությունից բացի Ա. Երեմյանը անվանի նկարչի մասին գրել է նաև մի հոդված, իսկ գրախոսվող գրքի տպագրության ընթացքում լույս են տեսել Ս. Տեր-Ներսեսյանի և Բ. Նարկիզի ուսումնասիրությունները, որտեղ առանձին էջեր նվիրված են Սարգիս Պիծակի արվեստին[18]։

Վ. Ղազարյանի այս անդրանիկ ուսումնասիրությունը նոր խոսք է հայ մանրանկարչության, մասնավորապես կիլիկյան գրքարվեստի հետազոտության բնագավառում։

ԼԵՎՈՆ ՉՈՒԴԱՍՉՅԱՆ

---

[10] S. Der-Nerseesian, Նշվ. աշխ., էջ 33—35։

[11] S. Der-Nersessian, Note sur la Bible no. VR 1011 du musée de l'Ermitage („Труды Государственного Эрмитажа", т. X, 1969, с. 116—119).

[12] S. M. Pelekanidis, P. C. Christou, Ch. Tsioumis, S. N. Kadas, The Treasures of Mount Athos, Illuminated Manuscripts, vol. 1. Athens, 1974 p. 406, fig. 66.

[13] S. Der-Nersessian, Manuscrits arméniens illustrés des XIIe, XIIIe et XIVe siècles de la Bibliothèque des pères Mekhitaristes de Venise, Paris, 1937, Album, pl. LXXVIII, fig. 158.

[14] Այդ նամակի և ուղարկված լուսապատկերի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Վ. Ղազարյանը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում։

[15] Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 166; Ս. Ա. Ավագյան, Ո՞վ է Սանահնի տապանագրում հիշատակված Սարգիս Փարշիկը («Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 221—230), S. Der-Nersessian, L'Art Arménien des origines au XVIIe siècle, Paris, 1977, p. 206.

[16] S. Der-Nersessian, Études Byzantines et Arméniennes-Byzantine and Armenian Studies. t. 2, Louvaine, 1973, fig. 424.

[17] S. Der-Nersessian, The Chester Beatty Liberary..., pp.31-32, 184.

[18] Ա. Երեմյան, Մանրանկարիչ Սարգիս Պիծակի արվեստի էական հատկանիշները («Դբաղարկ տարեգիրք», 1970, էջ 187-203); S. Der-Nersessian, L'Art Arménien.., pp 161—162; B. Narkiss, Նշվ. աշխ. էջ 81—87։